ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի՛ տիկին Գասպարյան,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 4 «Ձնծաղիկ» մսուր-մանկապարտեզում շինարարական աշխատանքները մոտենում են ավարտին, և շուտով մանկապարտեզը կհանձնվի շահագործման, ինչպես նաև վերանորոգումից հետո նախատեսվող խմբերի ավելացումը, որը ենթադրում է որոշակի հաստիքների ավելացում, խնդրում ենք սահմանված կարգով արտոնել մսուր-մանկապարտեզի հաստիքացուցակում ավելացնել հետևյալ հաստիքները՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 21.02.2022 թվականի 09-Ն հրամանի հավելվածը, որով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական եվ համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, որպեսզի մինչ մանկապարտեզի շահագործումը հնարավոր լինի իրականացնել նաև մանկավարժական աշխատողների մրցույթները՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 17.02.2022 թ. 08-Ն հրամանով սահմանված կարգի: Քանի որ «Ձնծաղիկ» մսուր-մանկապարտեզը գործելու է 10 խմբով, ուստի ավելացող հաստիքներն ու դրույքաչափերն են՝

Մեթոդիստ, տնօրենի տեղակալ ուս. գծով – 0.25 միավոր

Խոհարար – 1 միավոր

Լվացարար – 0.25 միավոր

Դռնապահ - հավաքարար – 1 միավոր

Դաստիարակ - 3x1.17 /3.51 միավոր/

Դաստիարակի օգնական – 3x 1 /3 միավոր/

Երաժշտության ղեկավար – 0.75 միավոր

Ֆիզկուլտուրայի հրահանգիչ – 1 միավոր

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկապարտեզը վերաբացվում է ձմռանը և անցնելու է կենտրոնական ջեռուցման, առաջարկում ենք հնարավորության դեպքում ավելացնել հնոցապանի 1 հաստիքային միավոր ջեռուցման սեզոնին:

Հարգանքով՝

Կրթության և մշակույթի բաժնի պետ՝ Լ. Հակոբյան

04.11.2024 թ.